Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի N 2516 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 172 - թիվ 196 որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. Թիվ 173-Ա որոշումն ընդունվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի խախտումով։

2. Թիվ 174-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին, բացի այդ որոշման նախաբանում հղում է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշմանը, որը ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ։

3. Թիվ 180-Ա որոշման նախաբանում հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, բացի այդ որոշման մեջ օտարման գինը սահմանված չէ։

4. Թիվ 176-Ա որոշման հավելվածում անհրաժեշտ էր նշել թե վարձավճարի մեկնարկային չափը հողամասի ինչ մակերեսի և ինչ ժամանակահատվածի համար է նախատեսված։

5. Թիվ 177-Ա, թիվ 186-Ա, թիվ 189-Ա և թիվ 193-Ա որոշումների նախաբաններում հղումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին։

6. Թիվ 193-Ա որոշման նախաբանը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասին։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 1-ի N 2516 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի երկրորդ նստաշրջանի հերթական նիստի թիվ, թիվ 173-Ա և 175-Ա որոշումների վերաբերյալ

Թիվ 173-Ա որոշման բովանդակությունում գրառված «վերաբերյալ» բառից հետո գրառել «ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի» բառերը: Թիվ 173-Ա որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու կողմից ներկայացվել է ժամկետի խախտումով /հիմք «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս/:

Թիվ 173-Ա որոշմամբ հղում է պարունակում հավելվածին, սակայն հավելվածի (հավելվածների) վերնագրի վերևի մասում նորմատիվ իրավական ակտի վավերապայմանները նշված չեն՝ մասնավորապես ընդունող մարմնի կամ պաշտոնատար անձի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և հերթական համարը /հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետեր/: Բացի այդ որոշման բաղկացուցիչ (անբաժանելի) մաս կազմող հավելվածը (հավելվածները) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից կնքված և ստորագրված չէ:

Թիվ 175-Ա որոշման նախաբանում գրառված «ա. և բ. ենթակետերը» բառերը փոխարինել ««ա» և «բ» պարբերությունները» բառերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի երկրորդ նստաշրջանի հերթական նիստի թիվ, թիվ 172-Ա և 194-Ն որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

10.11.2022թ.
Կատարող՝ Ա. Հարությունյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ թիվ 176-Ա, 177-Ա, 178-Ն, 179-Ն, 180-Ա, 181-Ա, 182-Ա, 183-Ա, 184-Ա, 185-Ա, 186-Ա, 187-Ա, 188-Ն, 189-Ա, 190-Ա, 191-Ա, 192-Ա, 193-Ա որոշումների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 176-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին տողով նախատեսվում է վարձակալության տրամդրել վարելահող և արոտ հողատեսքերի հողեր, որոնց համար սահմանվել է տարբեր մեկնարկային գներ, եթե վարձակալությամբ է տրամադրվում գյուղատնտեսական հողեր մեկ լոտով ապա պետք է սահմանել վարձավճարի մեկ մեկնարկային գին, կամ պետք է առանձնացնել հողամասերը և դրանք դիտարկել առանձին լոտեր:
2. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 177-Ա որոշման մեջ կատարված հղումները սխալ են, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 16-ի թիվ 550-Ա որոշումներով, այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
3. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 178-Ն որոշման մեջ նշված չեն հողամասի գտնվելու վայրը, հողագնահատման խումբը, այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
4. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 180-Ա որոշման մեջ կատրված հղումները սխալ են, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 16-ի թիվ 550-Ա որոշումներին: Բացի այդ նշված չէ օտարվող հողամասի ուղղակի վաճառքի եղանակով օտարման գինը, այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
5. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 181-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դրույթներին:

6. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 182-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դրույթներին:
7. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 186-Ա որոշման մեջ կատարված հղումները սխալ են, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 16-ի թիվ 550-Ա որոշումներով, այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
8. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 187-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի դրույթներին:
9. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 188-Ն որոշման մեջ նշված չեն հողամասի գտնվելու վայրը, հողագնահատման խումբը, այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
10. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 189-Ա որոշման մեջ կատարված հղումները սխալ են, անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 16-ի թիվ 550-Ա որոշումներով, այդ իսկ պատճառով հնարավոր չէ եզրակացություն տրամադրել իրավական ակտի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ:
11. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 190-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00048 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով, ավտոտեխսպասարկման կայան կառուցելու նպատակով: Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 263-Ն հրամանով հաստատված 33-րդ աղյուսակի 1-ին կետի հողամասի նվազագույն մակերեսը՝ 1 ավտոմոբիլի հաշվարկով պետք է լինի առնվազն՝ 0.01 հա, կամ 100 քմ:

12. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 191-Ա որոշման մեջ պետք է հղում կատարել ՀՀ կառավարության 2006 թվականի 912-Ն որոշմամբ հաստատված 35-րդ կետի դ) ենթակետին:
13. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 193-Ա որոշման գրառված չեն հողամասի ծածկագիրը, հողամասի մակերեսը:
14. Համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 179-Ն 183-Ա 184-Ա 192-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

23.11.2022թ.